

նորդին, նա, ջեմ ուղեր, կ'ըսէր, ա-  
նոնց փնասը, զի այնպէս արբած էին՝  
որ գուցէ չեն գիտեր ըրածնին:

Իրենց այն գեղեցիկ մանկութեան  
ատեն ծանօթացած բարեկամք՝ որ յան-  
կարծ հասարակաց խնջոյից պարտիզի  
մը մէջ պատահեցան իրարու, այսպի-  
սի անհանգիստ երեկոյ մը անցուցին  
նոյն օրը: Բայց վարժապետին համար  
ամենէն ցաւալին այն էր՝ որ իր պա-  
տրաստել տուած ընթերիքը բանի մը չը-  
ծառայեց. և Օսթար՝ որ դրամի մեծ  
յարգ կու տար, փոխանակ կերակրոց  
փոքրիկ ծախքը վճարելու՝ որպէս զի  
պանդոկապետին կորուստ չըլլայ, ա-  
նոնց զինք առատապէս վճարեց:

Կը շարունակուի:

## ՊԻՐՍ ՆԷՄՐՈՒԹ

ՆԽՈՒԷԻ ԵՕԹՆ ՄՈՒՈՐԱԿԱՑ ՏԱՃԱՐԸ

Այն զարմանալի աւերակաց կոյտը՝  
որ Պիրս Նէմրոսը կը կոչուի Արաբա-  
ցոց լեզուով (որ Պալատ Ներքովից կը  
նշանակէ), հին Բաբելոնի աւերակնե-  
րէն շատ հեռու չէ. և թերեւ իսկ իր  
պարսպաց մէջ կը պարունակուէր եր-  
բեմն: Հիլլա քաղաքը՝ որուն բնակիչքը  
8 կամ 9000 են, Եփրատայ ձախ կողմը  
կ'իյնայ. և Պիրս անգղիական վեց մըղո-  
նով անկէ հեռու է գէպ 'ի հարաւային-  
արեւմուտք:

Այս շէնքին սկիզբը և նպատակը  
մինչև 1855 խորին մթութեան մէջ ըն-  
կեր էր, և մինչև այն ատենը զանազան  
կարծիքներ կային այս քարակոյտ հով-  
տիս վրայ: Հեղինակաց մեծագոյն մա-  
սը՝ քրիստոնեայ ըլլայ, հրեայ և կամ  
մահմետական, զաօրկայ Բաբելոնի աշ-  
տարակին հետ նոյն կը համարին: Հռո-  
չակաւոր Բենիամին Դուտելա կը գրէ  
որ այն ցրուեալ ժողովրդեան շինած աշ-  
տարակը Հիլլայէն չորս մղոն հեռու է:  
Ասիկայ աշ-ա-կոշը ըսուած նիւթէ մը  
շինուած է, զոր մինչև հիմայ կը գոր-  
ծածեն Արաբացիք: Խարխիսը երկու

մղոն շրջապատ ունի և մէկ շրջանակա-  
ւոր սանդուղ մը, որ մինչև գագաթը  
կը տանի: Ուսկից կը տեսնուին մինչև  
քսան մղոն հեռաւորութեամբ շրջակայ  
երկիրներ: Այն հռչակաւոր կրակը՝ որ  
իրեն շատ փնաս հասուց, զինքը երկու  
բաժնած է:

Այս աւերակաց վրայ մեղի առաջին  
լոյս տուողը Լէյարտ եղաւ, որ իր Խու-  
զարկութիւն Նինուէի և Բաբելոնի ը-  
սուած գրոցը մէջ այսպէս կը խօսի.  
« Կումպաքի յիշատակարանաց մէջ քա-  
նի մը խորհրդածութիւններ կարգացի  
արեգակնային ժամացուցին վրայօք, զոր  
Սուրբ Գիբըն ալ կը յիշատակէ Բ. Թա-  
զաւորութեանց մէջ, նոյնպէս և Եսայի  
38.8. հեղինակս կը համարի որ ասիկայ  
Թիկլաթ-Փիլեսէր-Առ-Ասուր անունով  
մէկէն ընծայուած ըլլայ, և այնպէս կը  
նկարագրէ, որ շատ նման է անոր՝ զոր  
ես Միջագետաց Պիրս Նէմրութի աւե-  
րակաց վրայ տեսայ, այսինքն աստիճա-  
նաւոր հովանոց մը գագաթը գաւազան  
մը հաստատած, որուն շուքը ժամը կ'ի-  
մացընէր »:

Ուստի Լէյարտ կը հարցընէ, թէ այս  
բաներս արդեօք չէ՞ն ցուցնեն որ այն  
չէնքը աստղաբաշխական քննութեանց  
համար եղած ըլլայ:

Հարցմանս պատասխանը պատմու-  
թեամբ մը մեկնեմ, ուր պիտի տես-  
նանք թէ Պիրս Նէմրութ ուրիշ բան  
չէր՝ բայց եթէ աստղաբաշխութեան  
տաճար մը: Կ'ըսեն որ հազարաւոր քա-  
րանց վրայ Նաբուգոդոնոսորի անունը  
գրուած կայ եղեր. անշուշտ այս ինք-  
նակալը շէնքին հետ վերաբերութիւն  
մը ունեցեր է:

Այս աւերակաց վրայ ամենեւին տե-  
ղեկութիւն չկար, մինչև որ հռչակաւորն  
Ռաուլինսըն, անգղիացի հիւպատոն 'ի  
Պաղտատ, որ շատ հմուտ էր ասորի և  
քաղդէացի աւանդութեանց, վերցուց  
այն քողը՝ որ անթափանցելի մնացեր  
էր շատ տարիներէ 'ի վեր:

Ասիկայ շատ մը գործաւորներու ա-  
պրսպրեց, որ փորեն գետինը, մինչև որ  
պատի մը կամ հովանոցի մը հասնին,

որուն եթէ հանդիպին, զործը փորելով առաջ տանին դէպ յաջ և դէպ ՚ի ձախ: 150 ոտք փորելէն վերջը, յետ երկամանայ աշխատութեանց պատ մը գտան, և Ռաուլինսըն դիտեց որ այս պատին ծայրերը ուղղանկիւն կը վերջանային, ուստի պէտք էր որ քառակուսի մը ըլլար 27 ոտք երկայնութեամբ, նոյնպէս իրեն համեմատ առաստաղ մին ալ ունենար:

Աշխատութիւնը առաջ տանելով կէս ժամէն հանդիպեցան ծակի մը, որուն մէջ գլան մը գտան, պայծառ և մաքուր վերնագրով մը գոցած, այնպէս որ կարծես թէ նոր քանդակուեր էր: Միւս անկիւնն ալ նոյնպէս գտնուեցաւ առջինին զոյգ:

Այս գլանաց գրերը մեկնելով, գրտնուեցաւ, որ Նաբուգոդոնոսորի տիտղոսով կը սկսէին, նոյնպէս և վերջն ալ այս ինքնակալիս Բաբելոնի մէջ ըրած մեծագործութանցը վրայ կը խօսէր: Կար նաև գլանին մէջ այս ալ. « Տաճար եօթն միլորակաց, թագաւորէն 500 տարի առաջ շինուած (գրեթէ 1100 տարի նախ քան զԲրիստոս): և վերջը անձրևներէն չպաշտպանուելուն համար կործաներ էր, անոր համար Մերովգաք աստուածը ազդեր էր որ նորէն շինեն»: Գրուածքէն կ'իմացուի որ թագաւորը հաստատուն յատակին չէ դրպած, հապա միւս մասերը միայն նորոգեր է:

Մտադիր քննութիւններ ցուցին, որ այս գլանին մէջի գրուածքն ստոյգ էին, և թէ աստիճանաւոր հովանոցները եօթն էին, որ իւրաքանչիւր միլորակաց մէկուն ընծայուած էր, և այն գուներով էին, որոնք քաղցեայք և աստղագէտք կու տան միլորակաց, և այս բանիս վրայօք աւանդութիւն ալ կայ Քաղգէացոց մէջ:

Այս ամեն բաներս ալ ճիշդ կը համապատասխանեն անոնց՝ զորս Դանիէլ կը պատմէ Նաբուգոդոնոսորի վրայօք. սոյնպէս և գլանին մէջի գրուածքն ալ կը ցուցնեն թագաւորին գոռոզ բարքը, կարծելով որ իր գործերը յաւիտեան

պիտի տևեն, և իր ընտանիքը յաւիտեան պիտի թագաւորէ:

Պեղմունքս ցուցուց թէ ինչ բանի համար որոշուեր էր այս զնտերով տաճարը, և թէ չէ Նաբուգոդոնոսոր՝ այլ իրմէ 500 տարի առաջ շինուեր է. միայն շինողին անունը չի գիտցուիր: Ասկէ կըրնանք հետեցնել որ այս թագաւորս այն աւերակաց յարգը ճանչցաւ, և թերևս այս Միլորակաց տաճարը Բաբելոնի աշտարակին վրայ բարձրացած ըլլայ. բայց ասիկայ պարզ ընթացքով չի մըն է:

### ՅԱԿՈԲ ՌՈՉԻԼՏ ՊԱՐՈՆ

Ա՛հ, թէ Ռոչիլտ ըլլայի... Ո՛րչափ անգամ չեմ լսած այդ հառաչանքը. և այդ խօսքը զուրցողին միտքը « ուղածս կրնայի ընել » կը նշանակէ: Այսպէս Ռոչիլտի անունը հասարակ մարդոց համար մեծութեան և կարողութեան հոմանիշ եղած է. վասն զի չատ անգամ աշխարհիս խաղաղութիւնը և պատերազմը, և նաև թագաւորութեանց բաղդը՝ անոր քսակին լարէն կախուած էին: Եւ որովհետև ասանկ մէկ կրեսոսի մը համար քիչ կամ ոչինչ աշխատանք մըն է բարեգործ և վեհանձն ըլլալը, Ռոչիլտ անունը կրնայ նաև բարեգործութեան և վեհանձնութեան հոմանիշ հնչել:

Եթէ Ռոչիլտ ըլլայի... աղէկ, ընթերցող դու, վստահ եմ որ ամեն անգամ որ դու քեզի ատանկ հառաչանք մը ըրած ես, չես կրցած երբեք անանկ յարմար պատասխան մը տալ որ դու զքեզ դո՛հ ընես: Ես ջանամ քեզի այդ պատասխանը տալու, որ թէ և զքեզ չկարենայ դո՛հ ընել ըստ ամենայնի, բայց գոնէ յարմար ըլլայ և ճշմարիտ: Եթէ դու և ես միանգամայն երկուքս Ռոչիլտ ըլլայինք, գեռ ևս անանկ կը մնայինք, ինչպէս Աստուած զմեզ ստեղծեր է. որ է ըսել մարդիկ՝ հանդերձ մարդկութեան յատուկ ձիւղբերովը և ախտերովը: Հաւասարապէս տարուբերուելով